ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔ

Արմավիրի մարզ
գ. Տարոնիկ, 1148
հեռ.093.97.06.18

N -67

05. մայիսի 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի 2016թ. ապրիլ ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝ 5 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԽԼՂԱԹՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10.80/5984-16
20 05 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18. մարտի 2016 թվականի

Թիվ-7

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանի 9.1.4 կետի պահանջները.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2016 թվականի ապրիլի 28-ին Տարոնիկի համայնքապետարանում անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<ՀԱԵԿ-ի ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով.
2. Ուսումնավարժությանը ընդգրկել՝
   1) Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկի համայնքապետարանը.
   2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի տարահանման հավաքակայանի վարչակազմը.
   3) Համայնքի ուժերի (կազմավորումների) ղեկավարներին:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Մ. Ավագյանին՝
   1) Մինչև 2016 թվականի ապրիլի 11-ը կազմել և համայնքապետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաթեթը.
   2) Կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը ուսումնավարժության անցկացմանը.
   3) 2016 թվականի ապրիլի 25-ին զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին.
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավար Ա. Խլղաթյանին:

5. Սյուն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2016 թվականի մարտի 18
գ. Տարոնիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

20.ապրիլի 2016թ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ-7

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկի համայնքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի քարտուղարի փոխարինողին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2016թվականի ապրիլի 20

գ. Տարոնիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

---

# Հ Ր Ա Մ Ա Ն

Թիվ -5

26.ապրիլի 2016թվական

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի <<բ>> ենթակետով, աշխատանքային ծառայողական պարտականությունները ոչակյալ կատարելու համար.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին Մխիթար Ավագյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրում մեկ աշխատավարձի չափով ութանասուն մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն հրաման ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Մ.ԱՎԱԳՅԱՆ

2016 թվական ապրիլի 26

գ. Տարոնիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

---

# Հ Ր Ա Մ Ա Ն

Թիվ -6

26.ապրիլի 2016թվական

## ՏԱՐՈՆԻԿ ԳՅՈՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱՐԻՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղի գրադարանի վարիչի Ալինա Վարդանյանի նկատմամբ կիրառել խրախուսում՝ միանվագ դրամական պարգևատրում մեկ աշխատավարձի չափով յոթանասուն յոթ հազար ինը հարյուր չորս Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սյուն հրաման ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՎԱԳՅԱՆ

2016 թվական ապրիլի 26

գ. Տարոնիկ